ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2023թ. **N ----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՐՈՒՆԶԵ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 6-րդ փողոցն անվանակոչել հայ կինոռեժիսոր, սցենարիստ և դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ֆրունզե Դովլաթյանի անվամբ՝ «Ֆրունզե Դովլաթյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ **Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՐՈՒՆԶԵ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ֆրունզե Դովլաթյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՐՈՒՆԶԵ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Ֆրունզե Դովլաթյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՖՐՈՒՆԶԵ ԴՈՎԼԱԹՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ կինոռեժիսոր, սցենարիստ և դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ֆրունզե Դովլաթյանը ծնվել է 1927թ. մայիսի 26-ին ՀՀ Նոր Բայազեթ (այժմ՝ Գավառ) քաղաքում:

Վաղ հասակից տեղափոխվել է Երևան, որտեղ սովորել է Մ.Գորկու անվան դպրոցում: 1947թ. ավարտել է Երևանի Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի դերասանական ստուդիան: 1942-1953 թվականներին աշխատել է նույն թատրոնում՝ որպես դերասան: 1944թ.-ից նկարահանվել է կինոյում՝ «Դավիթ Բեկ» (1944թ.), «Անահիտ» (1947թ.), «Ինչու է աղմկում գետը» (1958թ.), «Բարև, ես եմ» (1965թ.), «Սարոյան եղբայրներ» (1968թ.) և այլն: 1960թ. ավարտել է Մոսկվայի կինեմատոգրաֆիայի համամիութենական ինստիտուտի ռեժիսորական ֆակուլտետը՝ Ս. Գերասիմովի արվեստանոցը: 1959-1964 թվականներին աշխատել է «Մոսֆիլմ» կինոստուդիայում: 1966-1969 թվականներին եղել է Հայաստանի կինեմատոգրաֆիստների միության առաջին քարտուղարը, 1986թ.-ից՝ «Հայֆիլմ» կինոստուդիայի գեղարվեստական ղեկավարը: Կինոաշխարհում դրսևորվել է որպես իր գործին բացառիկ նվիրված ու աշխատասեր անհատ, ազգային կինոարվեստում իր ասելիքն ունեցող, արդիաշունչ խնդիրները խորությամբ ընկալող ու յուրովի մեկնաբանող բեմադրիչ: Նկարահանել է մի շարք կինոնկարներ՝ «Առավոտյան գնացքներ» (1963թ.), «Բարև, ես եմ» (1965թ.), «Սարոյան եղբայրներ» (1968թ.), «Երևանյան օրերի խրոնիկա» (1973թ.), «Երկունք» (1977թ.), «Ապրեցեք երկար» (1979թ.), «Մխիթարյանները» (1982թ.), «Մենավոր ընկուզենի» (1986թ.), «Կարոտ» (1989թ.), «Լաբիրինթոս» (1995թ.) և այլն: Կինոռեժիսորի «Բարև, ես եմ» (1965թ.) կինոնկարով նշանավորվել է հայ կինոյի նոր փուլը: 1981-1997 թվականներին դասավանդել է Երևանի Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում (1992թ.-ից՝ պրոֆեսոր): 1989-1991 թվականներին եղել է ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, 1994-1997 թվականներին՝ Թեքեյան մշակութային միության նախագահը: Պարգևատրվել է մի շարք շքանշաններով, պատվոգրերով, 1979թ.՝ Լեհաստանի արվեստների վաստակավոր գործչի կոչումով: 1950թ. արժանացել է ԽՍՀՄ, 1967թ. և 1971թ.՝ ՀՀ Պետական մրցանակների, 1966թ.՝ Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի, 1969թ.՝ Հայաստանի, 1983թ.՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստի կոչման:

Ֆրունզե Դովլաթյանը մահացել է 1997թ. օգոստոսի 30-ին Երևանում:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 17-րդ կետը՝ առաջարկվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Ներքին Շենգավիթի 6-րդ փողոցն անվանակոչել հայ կինոռեժիսոր, սցենարիստ և դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ֆրունզե Դովլաթյանի անվամբ՝ «Ֆրունզե Դովլաթյան փողոց»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ